Արձանագրություն թիվ 4

2019թվ. մայիսի 20-ին տեղի ունեցավ Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 12-րդ Ա դասարանի ծնողական ժողովը:

Օրակարգում՝

1.Սովորողների առաջադիմության , պետական ավարտական և միասնական քննությունների օրերի մասին հաղորդում:
2.<<Վերջին զանգի>> հետ կապված կազմակերպչական հարցեր:

1.Լսեցին՝- Սովորողների առաջադիմության , պետական ավարտական և միասնական քննությունների օրերի մասին հաղորդման հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ՝ Մ. Քոչարյանը; Նա ամփոփ ներկայացրեց սովորողների առաջադիմությունը, նշեց, որ ծնողները պետք է հետևողական լինեն երեխաների առաջադիմության վերականգման գործում, քանի որ առջևում պետական ավարտական և միասնական քննություններն են:
Դասղեկը հետևողական է եղել հերթապահության, հաճախումների, դասագրքերի, ինչպես նաև դասարանի սանիտարական վիճակի ու գույքի պահպանմանը:
Միջոցներ են ձեռք առնվել այն աշակերտների նկատմամբ, ովքեր փորձել են խանգարել կամ լքել դասերը: Ծնող-դասղեկ կապի միջոցով բոլոր ծագած խնդիրները հարթվել են:
Այնուամենայնիվ,մի քանի աշակերտներ հասել են բացակայության վտանգավոր շեմին:

Որոշեցին.- Դասղեկի և բոլոր ուսուցիչների կատարած աշխատանքը գնահատել բավարար,100 տոկոս առաջադիմություն ապահովելու համար: Հետևողան լինել ավարտական քննություններին պատշաճ ներկայություն ապահովելու համար:

2.Լսեցին.- .<<Վերջին զանգի>> հետ կապված կազմակերպչական հարցեր:
Ելույթ ունեցավ ծնողական խորհրդի նախագահ Լ. Հովհաննիսյանը: Նա առաջարկեց, հաշվի առնելով բոլոր ծնողների համաձայնությունը, որոշակի զումար տրամադրել << Վերջին դաս>>-ի և <<Վերջին զանգի >> կազմակերպման , դասասենյակի , դպրոցի դահլիճի ձևավորման, նկարահանման և կրծքազարդերի համար:

Որոշեցին.- Առաջարկը միաձայն ընդունվեց բոլոր ծնողների կողմից: Բոլոր ծնողներ էլ հավաստեցին , որ դպրոցական վերջին օրը չի կարող անշուք լինել իրենց երեխաների համար, և պատրաստ են զումար տրամադրել փուչիկների, կրծքազարդերի և նկարահանման համար: Գումարային հարցերը կկարգավորեն դպրոցից դուրս, ծնողական խորհրդի նախագահի գլխավորությամբ, որի չափը հարկ է նշել որոշել չեն կարող, դա կպարզվի գնումներ կատարելիս և կկանոնակարգվի ծնողների կողմից, բոլորի համաձայնությամբ:

Ծնողական խորհրդի նախագահ՝ / Լ. Հովհաննիսյան/
Քարտուղար՝ / Կ. Շահբազյան /